ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԿԱՃԱՌԻՆ ՄԷՋ

Գրեց՝ ՓՐՈՖԵՍՈՐ ՅՈՎՍԷՓ Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ



ԼԵՒՈՆ ՕՐԲԵԼԻ

Խորհ. Ս. Հանրապետութեանց Միութեան Բժշ. Սպասարկութեան Գնդապետ-Զօրավար, անոր Գիտութեանց Կաճառի Փոխ Նախագահ եւ Բժշ. Զինուորական Բարձր Վարժարանի պետ եւ Հայկական Գիտութեանց Կաճառի անդամ, որ իր ուշագրաւ երկասիրութեանց համար արժանացած է Ընկերվարական Աշխատանքի Դիւցզնի ամենաբարձր տիտղոսին:

ՄՈՍԿՎԱ Յուլիս 5.— Խորհրդային Ընկերվարական Հանրապետութեանց Միութեան Կաճառի 220-րդ տարեդարձին առթիւ, Խորհրդային Կառավարութիւնը պատւանշաններ շնորհեց բազմաթիւ գիտուններու, որոնք Կաճառի գիտական հիմնարկներուն մէջ կը գործեն: Անոնց մէջ կը գտնուին կարգ մը Հայեր, որոնց գիտական գործերը հանրածանօթ են Խորհրդային Միութեան մէջ:

Ամենաբարձր պատիւը տրւած է Բժշկական Սպասարկութեան Գնդապետ-Զօրավար Լեւոն Օրբելիին, որ Խորհ. Ս. Հանրապետութեանց Միութեան Գիտութեանց Կաճառի առաջին Փոխ Նախագահն է, եւ ընդունած է Ընկերվարական Աշխատանքի Դիւցազնի տիտղոսը «գիտական ցցուն մեծագործութեանց համար ջղային դրութեան եւ ջղային ամենաբարձր գործունէութեան բնախօսութեան մէջ, ինչպէս նաեւ իր բազմամեա արդիւնալից գործերուն համար, կրթելով բարձրորակ ուժեր մասնաւորապէս Բանակի Բժշկական Սպասարկութեան համար»: Լեւոն Օրբելի՝ Խորհ. Ս. Հ. Միութեան Բժշկական Զինուորական Բարձր Վարժարանի պետն է, եւ անդամը՝ Հայկական Գիտութեանց Կաճառին: Ան՝ մեծ բնախօս Իվան Փավլովի աշակերտն էր, եւ այժմ կը շարունակէ անոր գործը:



Յ. Ա. ՕՐԲԵԼԻ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆՈՎ

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Լենինի աստիճանով վարձատրւած է իր եղբայրը, Յովսէփ Օրբելի, որ Խորհ. Ս. Հանրապետութեանց Միութեան Գիտութեանց Կաճառին անդամ է եւ նախագահը Հայկական Գիտութեանց Կաճառին, ու տնօրէնը Լենինկրատի Թանգարանին: Յովսէփ Օրբելի Ռուս մեծ գիտնական Նիքոլայ Մառի աշակերտն է եւ այժմ կը շարունակէ անոր գործը, եւ շատ հանրածանօթ է Հայ ժողովուրդին Հայկական մշակոյթի իր ուսումնասիրական գործով:



Յ. Հ. ՄԱՆԱՆԴԵԱՆ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆԵԱՆ



Խ. Ս. ԿՈՇՏՈՅԵԱՆՑ

Միւս Հայ գիտնականները, որոնք պարգեւատրւած են Լենինի պատւանշանով, ասոնք են.— Աբրահամ Ալիխանով՝ անդամ Խորհ. Ս. Հ. Միութեան Գիտութեանց Կաճառին, բնախօս եւ աստղաբան. Վիքթոր Համբարձումեան՝ Խ. Ս. Հ. Մ. Գիտութեանց Կաճառի անդամ եւ Հայկական Գիտութեանց Կաճառի փոխ նախագահ: Երկուքն ալ գործօն մասնակցութիւն ունեցած են Խ. Ս. Հանրապետութեանց Միութեան պաշտպանութեան մէջ՝ ընդդէմ Փաշական ասպատակիչներուն: Յովսէփ Օրբելի պաշարեալ Լենինկրատի պաշտպանութեան մասնակից եղած է եւ պաշտպանած է Թանգարանը: Ծանրապէս հիւանդանալով, հակառակ իր բաղձանքին, սաւառնակով փոխադրւած է Լենինկրատէն: (Շարունակութիւնը Տես Բ. էջ)

(Շարունակութիւնը Տես Բ. էջ)

ՀԱՅ ԳԻՏՈՒՆՆԵՐԸ Խ. Ս. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԿԱՃԱՌԻՆ ՄԷՋ

(Շարունակուած Ա. էջէն)

Կարգ մը Հայ գիտուններու շնորհուած է Աշխատանքի Կարմիր Դրօշի շքանշանը, անոնց կարկառուն գործին համար վերջնագոյն տարիներուն մէջ: Այս պատուանշանը տրուած է Յակոբ Մանանդեանի որ անդամ է Համամիութենական եւ Հայկական Գիտութեանց Կաճառներուն, Հայաստանի պատմութեան իր ուսումնասիրութեանց համար. Յարութիւն Ալիխանեանին, որ բնագիտութեան եւ ուսողութեան (մաթեմաթիքս) վարդապետ (տոքթոր) մըն է, իր խուզական ճառերուն համար զորս գրած է Հայկական Կաճառի Բնագիտական Հարցերու Հիմնարկի երիցագոյն գիտական աշխատաւորի մը հանդամանքով. ուսուցչապետ Ստեփան Պարխուտարով, իր կաղմակերպական ջանքին համար Ռուս Լեզուի Հաստատութեան Հիմնարկութեան մէջ, որուն օգնական տնօրէնն է, ըլլալով նաեւ Խորհ. Ս. Հ. Միութեան Գիտութեանց Կաճառի Գրականութեան եւ Լեզուի Բաժնի քարտուղարը: Պարխուտարով հանրածանօթ է Խորհ. Միութեան մէջ եւ իր ռուսերէն լեզուի քերականութիւնը կը գործածուի որպէս առձեռն գիրք Սովետ Միութեան երկրորդական բոլոր վարժարաններուն մէջ:

Կարմիր Դրօշի պատուանշան տրուած է նաեւ Տոքթոր Ալեքսի Ճիվելեկովին, որ Մաքսիմ Կորքիի Հիմնարկութեան երիցագոյն գիտական աշխատաւորն է, համաշխարհային գրականութեան համար: Տոքթոր Ճիվելեկով մասնագէտ մըն է իտալերէն գրականութեան եւ Արեւմտեան Եւրոպայի թատրոնի պատմութեան մէջ: Այս նիւթին շուրջ իր ուսումնասիրութիւնը դասագիրք մըն է որ կը գործածուի Խ. Ս. Հ. Միութեան թատերական բարձր դպրոցներու ուսանողներէն: Մի եւ նոյն պատուանշանը շնորհուած է Խաչատուր Կոչթոյեանցին, որ Համամիութենական ինչպէս նաեւ Հայկական Գիտութեանց Կաճառներու թղթակից անդամ մըն է: Կոչթոյեանց օգնականն է Կաճառական Նորայր Սիսակեանի, որ քարտուղարն է Խ. Ս. Հ. Միութեան Գիտութեանց Կաճառի կենսաբանական բաժնին Ալպախի (աղաւաղեալ) Կենսա-տարբաբանութեան Հիմնարկութեան: Վերջապէս, Աշխատանքի Կարմիր Դրօշի պատուանշանի արժանացած է Տիգրան Խաչատուրով, որ Հայկական Գիտութեան Կաճառի թղթակից անդամ մըն է եւ հռչակաւոր մասնագէտ մը երկաթուղային տնտեսագիտութեան մէջ:

Հայ գիտուններուն տրուած այս վարձատրութիւնները կ՚ապացուցանեն, որ անոնք արժանաւոր տեղ մը կը գրաւեն Խ. Ս. Հ. Միութեան գիտական աշխարհին մէջ: Իրենց գործով, անոնք աջակցեցան յաղթանակը շահելու ընդդէմ Գերման ֆաշական յարձակողականներուն:

Թարգմ. Ե. Կ. Տ.